

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի հոկտեմբերի 22-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. ՀՈՒՖ 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի արդյունքների ներկայացում:
2. 2016 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – ՀՈՒՖ 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի արդյունքների մասին / զեկուցող՝ Ա. Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ հեռակա ուսուցման ֆակուլտետի քննաշրջանի արդյունքներով ակադեմիական պարտքեր չունեցող ուսանողները ներկայացվել են փոխադրման հրամանի, իսկ լուծարային շրջանն անցել է կանոնակարգի պահանջներին համաձայն:

Լսեցին– 2016 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը /զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ և ՀՈՒՖ փոխդեկան/:

Որոշեցին – Մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ուսումնական պլաններով նախատեսված առարկայացանկը նախատեսել դասախոսների ուսումնական բեռնվածքի մեջ և ներկայացնել հաստատման:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան